

ԿԵՆԴՈՒՆԻ ԳԻՐՔԻՐ.

(2. Սպեոքընի.)

• Որդեակ, պահանջ զօրէնս հօր քո, եւ մի մերժեք զերաւտ մօր քո: Ընկալ զնոսա յանձին եւ ի գլուխ քո հանապազ, եւ արկ իբրեւ մանեակ ի պարանոց քո: Յորժամ շըլիցիս՝ ընդ քեզ տարջիր, եւ ընդ քեզ եղիցի. յորժամ նըլիցես՝ պահեսցէ զքեզ եւ յորժամ յանդիցես՝ խօսակից իցէ քեզ: Զի ծրագ է պատուիրանս օրինացն եւ լոյս, եւ ծանապարհ կենաց՝ յանդիմանութիւն եւ իրատ:

(Նաակք Զ. 20—21)

Երանի՛ նորան, որի համար հօր օրէնքը եւ մօր խրատը նշոյնն են, ինչ որ Տիրոջ օրէնքը եւ խրատը: Երանի՛ նորան, որին բնութեան եւ շնորհաց կրկին յոժը տանում է դէպի բարին: Խիտ մեղանշում են նորա, որոնք անցնում են իրենց երկրաւոր հօր եւ երկնաւոր Մեծ Հօր կամբից, որոնք հակառակ են գնում ծնողական սիրոյ քնքոյշ ներշնչման եւ Աստուծոյ ու խղճի պահանջներին: Սողոմոն, վերը բերած հատուածում, խօսելով այն մարդկանց մասին, որոնց համար ծնողաց պատուիրանը նշոյնն է, ինչ որ Աստուծոյ պատուիրանը, համոզում է այդպիսի մարդկանց բոլոր սրտով կապուել Աստուծոյ օրէնքի հետ եւ պարանոցի համար մանեակ դարձնել այն սորանով նա հասկանում է դէպի օրէնքն ունեցած ներքին սէրը եւ նորա բացարձակ խոստովանութիւնը: Աստուծոյ օրէնքը պէտք է կապուած լինի մեր էութեան ամենակենդանի գործարանի՝ սրտի հետ: Այն, ինչ որ մարդ ունի իւր ձեռքում՝ կարող է մոռանալ կամ կորցնել, ինչ որ կրում է իւր վերայ՝ կարելի է խել նորանից, իսկ ինչ որ կապուած է նորա սրտի հետ կը մնայ այդտեղ, քանի որ նա կենդանի է: Մենք պէտք է սիրենք Աստուծոյ խօսքը մեր բոլոր սրտով, մեր ամբողջ էութեամբ պէտք է ընդգրկենք նորան, մեր բոլոր ջերմ զգացմունքները պէտք է կապուած լինին նորա հետ: Երբ իմաստունը Ս. Գրքի մէջ մեզ սովորեցնում է, որ նա մեր պարանոցի համար զարդ պիտի լինի նա ուզում է ասել, թէ մենք երբեք պիտի չամաչենք նորա համար, մենք պիտի չկարմրենք, երբ մեր մասին ասեն, թէ աստուածապաշտ մարդիկ են, մենք երբեք չպէտք է ցածրացնենք մեր ձայնը, ինչ հասարակութեան մէջ էլ որ լինի աստուածայինը խօսելիս: Արիարար պէտք է կրենք մեր խաչը, համարձակ կանգնենք այն անձանց շարքում, որոց համար սուրբ է Աստուածային Յայտնութիւնը, ճշմարիտ կրօնը համարենք մեր ամենագեղեցիկ զարդը. եւ ինչպէս որ

դատաւորները զարգարում են իրենց ոսկեայ շղթաներով, նոյնպէս եւ մենք զարգարենք մեր պարանոցը մեր Տիրոջ օրէնքներով:

Սողոմոն առաջ է բերում երեք զխաւոր հիմունք մեզ դէպի այդ նպատակը ուղղելու համար. նա ասում է, որ Աստուծոյ օրէնքը (իսկ օրէնք մեզ համար ամբողջ Ս. Գիրքն է՝ մանաւանդ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանը) մեզ առաջնորդ կը լինի. «Յորժամ գնացես, ընդ քեզ տարջիր եւ ընդ քեզ եղիցի»՝ նա մեզ կը պահպանէ. «յորժամ ննջիցես» — (անպաշտպան), «պահեսցէ զքեզ»՝ նա մեզ համար կը լինի նաեւ թանգազին բարեկամ. «եւ յորժամ յառնիցես»՝ խօսակից իցէ քեզ:

Այս երեք ապացոյցներից իւրաքանչիւրն առանձին բաւական կը լինէր, ի հարկէ, դրդելու մեզ որչափ կարելի է մօտ լինել Աստուծոյ, խօսքին: Մենք կարօտ ենք առաջնորդի, որովհետեւ երբ մեր սեփական խելքին ենք ապականած, շուտով երեւան է դալիս մեր անզօրութիւնը, Ամէն տեսակ կեանքի մէջ պատահում են այնպիսի գծուար վիճակներ, երբ մենք չենք իմանում թէ ի՞նչ անենք, ահա այստեղ առաջնորդը անհամեմատ աւելի թանգազին է քան դեղին ոսկին: Մենք պէտք է դիմենք Աստուծոյ խօսքին, որը մարդկային կեանքի ճշմարիտ առաջնորդն է, եւ նա մեզ կուղղէ դէպի փրկութեան ճանապարհը. «չի ճրագ է պատուիրանս օրինացն» եւ լոյս, եւ ճանապարհ կենանց՝ յանդիմանութիւն եւ խրատ: «նոյնքան զօրեղ է եւ երկրորդ պատճառը. Աստուծոյ խօսքը կը պահպանէ մեր կեանքը: Միշտ կարող են անզգուշութեան լուրջներ պատահել, կը պատահեն մեր անկատարութեան պատճառով անխուսափելի դէպքեր, երբ մենք թըշնամու ձեռքը կընկնենք, եթէ մեզ չպաշտպանէ մի որ եւ է այլ զօրութիւն: Երանի՛ նորան, որի սրտում Աստուծոյ օրէնքը այնպէս է գրուած եւ նա նորանով իրրեւ ամուր դրահով, այնպէս է պատել իւր պարանոցը, որ միշտ անխոցելի է:

Բայց լաւ եւ համարում այժմ կանգ առնել երրորդ պատճառի վերայ, որ դրդում է մեզ սիրել Աստուծոյ խօսքը, նա դառնում է մեր թանգազին բարեկամը. «յորժամ յանդիցես»՝ խօսակից իցէ քեզ: Ս. Գրքի հոգեշունչ խօսքը, որ Դաւիթը անուանում է սաղմոսներում (ԺԷ եւ ԴԸ) Աստուծոյ օրէնք, յայտնութիւն պատուիրան եւ այլն, արգարների բարեկամն է: Նորա հիմքն ու էութիւնը, օրէնքը լցուցանող՝ Յիսուս Քրիստոսի Աւետարանն է, որ եւ առանձնապէս միսիթարիչ է հաւատացեալ հոգիների, Ամբողջ Ս. Գրքի համար կարելի է

ասել. «յորժամ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ»։ Ս. Գիրքը խօսակցութեամբ է նոցա հետ, որոնք սիրով հնազանդում են նորա օրէնքներին։ Մեկնութիւնը շատ պարզ է և մենք ուրախ պիտի լինինք, որ մեզնից իւրաքանչիւրը կարող է փորձել նորա ճշմարտութիւնը։ Աստուծոյ բանն արդարեւ խօսակցութեամբ է մեզ հետ։ Ես կը վերցնեմ այս դարձուածից բոլորով մի քանի մտքեր և կանգ կառնեմ նոցա վերայ։

Ա. Մենք տեսնում ենք այստեղ, որ Աստուծոյ խօսքը կենդանի է։ Այլապէս մի՞թէ կարելի էր ասել. «խօսակից իցէ քեզ»։ Մեռեալ գիրքը չէ կարող խօսակցել և համար գիրքը կարող չէ խօսել։ Ակնեռեւ է, որ սա կենդանի Գիրք է, ուրեմն և խօսութեան Գիրքը. «Բանդի կենդանի է Բան Աստուծոյ» և «Բան Տեառն մայ յաւիտեան»։ (Երբ. Դ. 12. Ա. Պատր. Ա. 25.)

Մեզնից շատ շատերին յայտնի է, որ սա մի զուտ ճշմարտութիւն է։ Մարդկանց գրած շատ գրքեր վաղուց արդէն մեռել են, կամ թէ մնացել են անկենդան, ինչպէս եգիպտական մումիաներ։ Նոքա ժամանակի ընթացքում կորցրել են իրենց արժէքը, նոցա վարդապետութիւնը մերժուած է և մեզ համար նոքա արդէն մեռած են։ Քրքրեցէք, գտէք նոցա մատենադարաններում, եթէ կամենում էք, բայց նոքա այլ ևս չեն կարող բարախել տալ մարդու սիրտը, վառել նորա հոգին։ Բայց Աստուծոյ այս ամենօրհնեալ Գիրքը, թէպէտ և հազարաւոր տարիներէ ի վեր ապրում է մարդկանց մէջ, բայց և այնպէս անմահ է և անթառամելի նորա զօրութիւնը։ Նորա թարմութեան ցօղը դեռ այժմ ևս վերան է և այժմ էլ նորա խօսքերը իջնում են երկնքից՝ զովարար որպէս անձրեւ։ Նորա ճշմարտութիւնները յաւիտեան կենդանի միութարութեան աղբիւր են։ Երբէք մի գիրք չէ խօսել այնպէս, ինչպէս այս Գիրքը։ Նորա ձայնը, որպէս Աստուծոյ ձայն, միշտ հզօր է և վեհ։

Ինչո՞ք է յառաջանում Աստուծոյ խօսքի կենդանի լինելը։ Ո՞չ ապաքէն նախ նրանից, որ զուտ ճշմարտութիւն է։ Մոլորութիւնը մահ է, ճշմարտութիւնը՝ կեանք։ Որչափ որ լաւ հաստատուած լինի մոլորութիւնը, լինի դա փիլիսոփայութեամբ, զենքի զօրութեամբ և կամ մարդկային կեանքի ընթացքով, կը գայ օրը՝ բորբոքուած որպէս հնոց, և ամեն անօրէնութիւն կը լինի ինչպէս եղէգն, և գալոց մեծ օրը կայրէ նորան (Մաղաքիա Դ. 1.)։ Ժամանակի ժանիքները ոչնչացնում են ամեն ստութիւն։ Սուտը խոտի նման շուտ հնձուում է և թառամում։ Ըշմարտութիւնը երբէք չէ մեռ-

նում։ Նա անմահ է։ Առաջ աղբիւրից վառուած լինելով, նա չէ կարող հանգչել։ Թէև հալածանքները մի առ ժամանակ կարծես խեղդում են նորան, բայց նա կրկին բորբոքուում է վրէժինդիր լինելու իւր հակառակորդներից։ Երբեմն յարգի շատ ուսմունքներ այժմ մոռացութեան են տրուած և վաղուց արդէն թաղուած են։ Բայց ճշմարտութիւնը, ինչպէս որ կայ Յիսուս Քրիստոսի մէջ, գերեզման չէ ճանաչում և թաղուելուց չէ վախենում։ Նա շարունակ ապրում է և պէտք է ապրի քանի որ Յաւիտենականը բազմած է Իւր աթոռի վերայ։

Աստուծոյ խօսքը ապրում է, որովհետև նա անփոփոխ է և անկախ։ Աստուած այսօր չի ասիլ այն, ինչ որ երեկ չէր կամենում։ Նոյնպէս և վաղը չի հերքիլ այն, ինչ որ այսօր է ասում։ Երբ մենք այսօր կարդում ենք երեք հազար տարի սորանից առաջ արձանագրուած ուխտի գիրը, այնպէս զօրեղ և նոր է նա մեզ համար, որ կարծես թէ Յաւիտենականի շրթունքները այսօր են արտասանել այդ խօսքերը։ Յաւիտենական խօսքը, որ ելնում է Ամենակարողի բերանից՝ նոյնքան զօրեղ և նոր է այսօր, ինչքան և այն ժամանակ, երբ Աստուած այդ ասում էր Մովսէսին։ Նշիլային, կամ ասել էր տալիս Եսայու կամ Երեմիայի բերանով։ Նա միշտ ճշմարտ է, անփոփոխ և հզօր։ Նա երբէք իւր ժամանակը կորցրած չէ կարող լինել, նա միշտ թարմ է՝ իր և մի կենդանի աղբիւր։

Աստուծոյ խօսքը ապրում է, որովհետև նորա մէջ խիտում է Քրիստոսի սրտի երակը։ Այդ սիրտը, որ երբեմն գեղարդով խոցուեցաւ, շարունակում է ապրել և վշտանալ մեղաւորների համար նոյն կարեկցութեամբ, որ ունէր Փրկիչը Իւր երկրաւոր կեանքի միջոցին։ Որոնողը կարող է հանդիպել մեղաւորների բարեկամ Յիսուսին Ս. Գրքի պուրակներում։ Դուք կարող էք գեռ ևս աշտըմ էլ տեսնել նորան, եթէ բաց աչքով նայէք հին մարգարէութեանց։ Դուք աւելի պարզ կարող էք տեսնել նորան չորս Աւետարանների մէջ։ Նա Առաքելոց թղթերում բաց է տնում ձեր առաջ իւր հոգու խորհուրդը և Յայտնութեան այլարանութեանց մէջ լսել է տալիս ձեզ իւր վերջին գալուստեան քայլերի ձայնը։ Կենդանի է Քրիստոս իւր Գրքի մէջ, դուք տեսնում էք նորա դէմքը համարեալ թէ իւրաքանչիւր էջում։ Լսում էք նորա խօսքը, կարծես թէ ինքն թնձամբ խօսում է ձեզ հետ։ Քրիստոս «երանութեանց սարից» խօսում է Իւր Գրքի մէջ մինչև այժմ. այն Աստուածը, որ ասաց «եղիցի լոյս», շարունակում է տալ նոյն հրամանը Իւր Գրքի էջերին։ Քանի գեռ անկաշառ և անփոփոխ յաւիտենական ճշմարտութիւնը իւր բոլոր ու-

ժող ապրում է նորա մէջ և կենդանի պահում խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափեցաւ, և Բան Տեառն մնայ յաւիտեան» (Ա. Պետր. Ա. 24—25):

Վերջապէս, որ բարձրագոյն է, Աստուածաշունչի միջոցով հաղորդակից ենք մենք Ս. Հոգու շնորհաց, Մենք գիտենք, որ նա ներգործում է Աստուծոյ խօսքը քարոզող պաշտօնականների մէջ, բայց մենք գիտենք նաեւ, որ նորա ներգործութիւնը միշտ աւելի շուտ և զօրեղ կերպով է արտայայտուում, երբ որ սորա Ս. Գրքի բնագիրն են մէջ բերում «Քան զի կենդանի է Բանն Աստուծոյ և ազդող է և հատու քան զամենայն սուր երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ և յօգից և ուղղոյ, և քննիչ է մտաց՝ և խոհոյց սրտից» (Եբր. Գ. 12): Նորա մէջ կեանք պէտք է լինի, որովհետեւ նորանով են մարդիկ վերածնունում:

Սիրեցէք միմեանց մաքուր սրբություն, ասում է Պետրոս առաքեալը, «ծնեալք վերստին ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապականացուէն. կենդանի և ամշտնջենական Բանիւն Աստուծոյ» (Ա. Պետր. Ա. 22, 23): Ճշմարիտ է, շատերը չեն հասկանում այս և նայում են Ս. Գրքին իրեն մի հասարակ գրքի, իսկ եթէ նորա այդ չեն հասկանում, թող գոնէ հաւատան այն բանին, որ մենք ինքներս փորձել ենք և հարկութեամբ անգամ ասել, մենք անկասկած զգացել ենք Աստուծոյ ներկայութիւնը Ս. Գրքի էջերում, ինչպէս որ Եղիան լսում էր Տիրոջ, երբ Տէրը խօսակցում էր նորա հետ «մեղմ ձայնիւ», Ս. Գիրքը յաճախ ներկայացել է մեզ իրեն Աստուծոյ բնակարան և այս բնակարանի դռները բացուել են մեր առաջ Աստուծոյ ձայնի հնչմամբ, Որի փառքը լցնում է այդ տաճարը, Եւ մենք հիացմամբ բացականչել ենք սերովութեան հետ միասին, «սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց» (Ես. 2, 1—4), Հրեաները իրենց Ս. Գրքի ծակաթին գրում են, «Տէր է ի տեղւոջս յայսմիկ, և ոչ է սա եթէ ոչ տուն Աստուծոյ և այս է գուռն կրկնից» (Ծննդ. ԻԸ 16, 17): Եւ նորա ճշմարիտ են ասում, Սա ճշմարիտ իւր երկնային գեղեցկութեամբ մի հոգեւոր տաճար է զարդարուած թանգազին ակներով՝ ներքուստ և արտաքուստ պատած մաքուր ոսկով, Տիրոջ ներկայութիւնը լցնում է նորան այնպիսի փառքով, որ յաճախ Տիրոջ խօսքի քարոզիչները պէտք է լուեն այդ վեհ փառքի լուսով շլացած, Հոգին Ս. Աստուած կենդանացնում է Ս. Գիրքը Իւր շնորհաց

ներշնչմամբ և նա դառնում է մեզ համար իսկապէս կենդանի խօսք:

Եւ արդ, սիրելի եղբայրներ, եթէ այս բոլորը այսպէս է և փորձը հաստատում է այդ, աւելի զգոյշ վարուենք այն Գրքի հետ, որ կենդանութիւն է տալիս մեզ, Շատերը ձեռնից չեն յիշիլ արգելօր իրենց մեղանշելը նորա դէմ, եթէ մենք հարցնենք, հոգ տանում էք դուք Ս. Գիրքը ուսումնասիրելու մասին, Եւ հաւատացած եմ, որ դուք կարգում էք այն, բայց խորասուզուում էք արգելօր դուք նորա մէջ, Բարիքը նրանց համար չէ, որոնք միայն կարգում են, այլ նրանց համար «որոնք Աստուծոյ օրէնքների մէջ հաճութիւն են գտնում և մտածում են նոցա մասին գիշեր և ցերեկ», Տանում է արգելօր ձեզ առաջնորդող և ուսուցանող գիրքը առօտս Յիսուս Քրիստոսի, Եթէ ոչ, յիշեցէք ուրեմն, որ դուք զրկուում էք այն բարիքից, որ կարող էիք վայելել, Եթէ ձեր հաւատը տատանման մէջ է, թարմացրէք ձեր հոգին աստուծային օրէնքների վերայ մտածելով, և դուք կասէք Գաւթի հետ «Բո Բանը կենդանացրեց ինձ», Եթէ դուք յոգնել էք կամ թուլացել, գնացէք և խօսեցէք այդ կենդանի Գրքի հետ, նա կը վերագործնէ ձեր եռանդը և դուք «կը սլանաք դարձեալ արծուի թևերով»:

Բայց գուցէ ձեր դարձը կատարեալ չէ, այն ժամանակ իմացէք, որ բիւր անգամ կենաց բանը լոյս է տուել իրեն ուսումնասիրողներին, նա տարածել է իւր բազումները նոցա վերայ, ինչպէս Եղիան մեռած մանկան վերայ, և նոցա մեռած հոգիները ոկսել են վերակենդանանալ:

Բ. Բնագիրն ասում է, «յորժամ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ», խօսակից՝ ուրեմն իրեն մի կենդանի անձն, Զէ գրուած «նա կը խօսէ և դու կը լսես նորա ձայնը», այլ «նա քո խօսակիցը կը լինի»:

«Խօսակից իցէ քեզ», ուրեմն ժամանակակից մարդկանց հետ, նա խօսում է թէ մեր և թէ մեր ժամանակի մասին այնպէս որոշ, որ կարծես թէ մեզնից միայն մի շարաթ առաջ է յայտնուել, Ոմանք ձեռք են առնում Ս. Գիրքը կամենալով գտնել նորա մէջ պատմական տեղեկութիւններ հին դարերի մասին, և իրօք գտնում են, բայց այդ չէ նորա իսկական բովանդակութիւնը, Ուրիշները որոնում են տեղեկութիւններ երկրաբանութեան մասին և եռանդով աշխատում են մօտեցնել կամ երկրաբանութիւնը Ս. Գրքին և կամ Ս. Գիրքը երկրաբանութեան, Բայց մենք կը թողնենք այդպիսի խնդիրների քննութիւնը գիտնականներին, Ս. Գիրքը խօսում է գրական, առաջին

մարդոց անկման, մարդկային բնութեան ազակա-
նութեան և նորա փրկութեան միջոցների մասին,
և ցոյց է տալիս այն աստուածային ճանապարհը,
որով անկեալ մարդը կարող է բարձրանալ և հաշտ-
ուել Աստուծոյ հետ: Կարդացէք ամբողջ Ս. Գիրքը
և դուք նորա ամեն մի մասի մէջ մարդու կեանքի
ամենաէական խնդիրները շօշափած կը տեսնէք:

Եւ սխալ է կարդում այն մարդը, որ նորա
ներքին բովանդակութիւնը թողած՝ արտաքին բա-
ների վերայ է ուշադրութիւն դարձնում:

Նա մի խօսուուն Գիրք է և խօսում է անձամբ
մեզ հետ, խօսում է ոչ թէ լուսնի կամ լուսնմագ
մոլորակի վերայ եղածների, ոչ միայն հին ժամանակ-
ներում եղածների և կամ զալոց ժամանակի մէջ
լինելիքների մասին, այլ ասում է այն, ինչ որ վերա-
բերում է նոյն իսկ մեզ, մեր իսկական պարտաւո-
րութեանց, սովորեցնում է թէ ի՞նչպէս մեղքը
այս օր նոյնպէս ներուել կարող է և թէ ի՞նչպէս
մեր հոգիները կարող են միանալ Քրիստոսի հետ,
Այս գրքի մի մեծ առաւելութիւնն էլ այն է, որ
նա խօսել կարող է ամեն կարգի և ամեն վիճակի
մարդոց հետ: Ահա թէ ի՞նչպէս է նա խօսում մե-
ղաւորների հետ. «Եկա՛ք խօսեցարուք ընդ միմիանս՝
ասէ Տէր, և եթէ իցեն մեղք ձեր իրրեւ զձանձա-
խարիթ՝ իրրեւ զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն
իրրեւ զորդան կարմիր՝ որպէս զասր սուրբ արարից»
(Ես. Ա, 18): Նա յաճախ մեղմութեամբ խրատում
էլ է մեղաւորներին: Նա նկարագրում է ամենա-
ճոխ խնջոյքներ և դիմելով քաղցեալներին՝ հրա-
ւիրում է ուտել և յագնալ. անսահման խմա-
տութեամբ և սիրով հիւսուած զգեստներ է տա-
րածում մեր առաջ և դառնալով մերկացած մարդ-
կութեան՝ համոզում է զգնուել, զգնուել աստուա-
ծային արդարութիւնը: Զկայ մի մարդ, ինչ վիճա-
կի մէջ կուզէ լինի, որ համարձակուէր ասել թէ Աս-
տուծոյ խօսքի մէջ իւր վերաբերեալ ոչինչ չէ գտնում:
Եթէ դու հալածել ես մէկին, Սաւուղի պատմու-
թիւնը խօսում է քեզ հետ. եթէ դու մեղանշել
ես, Գալթի զղջումը խրատում է քեզ. եթէ դու
անառակ կեանք ես վարել կամ գողութիւն ես ա-
րել, Ս. Գրքի մէջ կան քո վիճակին վերաբերեալ
առանձին տեղեր: Այն բոլոր վիճակների մասին,
որոնց մէջ մի մեղաւոր մարդ ընկնել կարող է,
յատուկ խօսքեր կան ասուած: Իսկ երբ մենք Աս-
տուծոյ ճշմարիտ որդւոց կոչուան ունինք, նորա
Գիրքը կրկնապատիկ աւելի ընտանի է մեզ և սիրելի,
Հարազատ հօր ձեռքով գրած և նորա քնքոյշ սի-
րով ներշնչուած մի նամակ է նա այն ժամանակ մեզ
համար:

Կրթիչ դուք երբեք չէք նկատել, թէ ի՞նչպիսի
մերձաւոր անձնական յարաբերութիւն է հաստա-
տուում ձեր և Ս. Գրքի մէջ ձեր ամեն տեսակ հոգե-
կան վիճակներում, թէ վշտի, թէ ուրախութեան
բոլորներին, երբ մենք ճշուած ենք ծանր վշտի ներ-
քոյ և թանձր մնալը պատում է մեր հոգին: Թորայ
գիրքը վշտակից է մեզ: Այդպիսի դրութեան մէջ ես
կրկին և կրկին անգամ կարգացել եմ՝ Երեմիայի
«ողբ» և մտածել, որ այդ ժամանակ ես կարող էի
գրել հէնց այն, ինչ որ Երեմիան է գրել, Ս. Գիրքը
վշտանում է մեզ հետ, երբ մենք ողբում ենք և
ընդհակառակն երբ մեր հոգին վերանում է և մենք,
կարծես թէ, տեսնում ենք մեր սիրեցեալ Փրկչի փառ-
քը, այն ժամանակ Աստուծոյ խօսքը Սաղմոսների հրա-
շալի լեզուով կամ Սողոմոնի Երգի քնքոյշ խօսքերով
կրկնում է մեզ այն ամէնը, որով լի է մեր սիրտը:
Նա խօսում է մեզ հետ ինչպէս կենդանի բարեկամ
որը մեզ հետ է եղել և խորխորատներում և բար-
ձունքների վերայ, կրել է մեր վշտերի ծանրութիւնը
և խնդակցել է մեզ մեր ցնծութեան ժամանակ,
Ինչ համար Աստուծոյ խօսքը իմ սեփական Գիրքն
է և ես չեմ կասկածում, եղբայր, որ նա նոյնն է
և քեզ համար: Այո՛, զարմանալի հաւատարիմ մի
բարեկամ է նա, երբեք զանցառու չէ գտնուում
նա ասելու ձեզ այն, ինչ որ օգտակար է ձեզ հա-
մար, նախանի նման բացականչում է նա. «Դու ես
այրն, որ արարել դայն», նա երբեք թոյլ չէ տա-
լիս, որ մեր մեղքերը աննկատ անցնեն, կամ որ
մեր խոտորումները աճելով բացարձակ մեղքեր
դառնան: Նա ժամանակին, հէնց որ մենք սկսում
ենք դէպի մեղքը հակուել, կանգնեցնում է մեզ և
ասում. «Զարթի՛ր», «արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք»
և այսպէս ուրիշ հաղարաւոր նախազուշացուցիչ
խօսքեր:

Գ. Բնարանի մէջ մենք տեսանք, որ Ս. Գիրքը
առանձին իմ մտերմութեամբ և բարեկամարար է
վերաբերում դէպի մեզ, «Յորժամ յառնիցես՝
խօսակից իցէ քեզ», կը խօսակցի՝ ասել է թէ
մտերմարար, բարեկամարար, չէ ասուած կը քարոզէ:
Հատերը բարձր են դնահատում Ս. Գիրքը, բայց
նայում են նորան իրրեւ բարձր ամբիոնից խօսող մի
մեծ վարդապետի, մինչդեռ իրենք կանգնած են
ներքեւում: Հեռու նորանից, ես չեմ դատապար-
տում այդպիսի յարգանքը, բայց աւելի լաւ կը լի-
նէր, եթէ նորա հասկանային Աստուծոյ խօսքի մեր-
ձաւորութիւնը, նա ոչ այնքան քարոզում է մեզ,
որքան խօսակցում մեզ հետ: Զէ ասուած, երբ
դու զարթնես, նա քեզ կը սովորեցնի, կամ կը
յանդիմանի, ոչ, ոչ, նա քեզ հետ կը խօսակցի,
Եթէ Աստուած մեզ համար մի գիրք գրէր Իւր

սեփական լեզուով՝ մենք չէինք կարող հասկանալ այդ գիրքը, կամ եթե հասկանայինք էլ՝ այնպես երկիւղ կաղզէր մեզ վերայ, որ կրակէինք աղաչել, որ Աստուած չը խօսէ մեզ հետ (Ել. Ի. 19)։ Բայց Տէրն Իւր խօսքի մէջ յաճախ գործ է ածում այնպիսի լեզու, որի միտքը թէեւ ճշմարիտ է, բայց չի արտայայտում Աստուծոյ գիտութիւնը, այլ համաձայնում է մարդկանց հասկացողութեան հետ։ Եւ սորանով կամենում եմ ասել, Աստուծոյ խօսքը գործ է ածում այնպիսի համեմատութիւններ և նմանութիւնների, որ յատուկ են մարդկային լեզուին և չեն համաձայնում բացարձակ ճշմարտութեան հետ, որ միայն ինքը Աստուած է տեսնում։ Ինչպէս որ մարդիկ երեխաների հետ խօսելիս նոցա լեզուն են գործածում, այնպէս էլ Աստուած է վարուում մեզ հետ Իւր ներողամիտ, զիջող խօսքով։ Ս. Գիրքը գրուած է ոչ թէ երկնային, այլ մեր աշխարհի լեզուով։ Այստեղ խօսք կայ Աստուծոյ ձեռքերի, մատների, թևերի և մինչև իսկ փետուրների մասին։ Հասկանալի է, որ այս բոլոր ծանօթ ձևերը գործ են ածում, որպէս զի յարմարուին մեր երեխայական ընդունակութեանց։ որովհետեւ այդ բոլորը աներևակայելի է Յաւիտեանական Աստուծոյ համար։ Ս. Գիրքը յարմարուում է մեր պարզութեան և ինչպիսի՜ քնքշութեամբ, Ենթադրենք թէ ամբողջ Ս. Գիրքը նման լինէր Եզեկիէլի մարգարէութեան, այն ժամանակ նա այն օգուտը չէր տալ մարդոց մեծագոյն մասին։ Ենթադրեցէք, որ ամբողջ Ս. Գիրքը Յայտնութեան նման խորհրդաւոր լինէր, մեր ուժից վեր չէր լինիլ նորա ուսումնասիրութիւնը։ Բայց ի՞նչպէս պարզ են Աւետարանները, որքա՞ն պարզ են այս խօսքերը։ «Որ հաւատացէ և մկրտուցի, կեցցէ» (Մարկ. Ժ. 2. 16)։ Ի՞նչ հիանալի պարզութիւն է նկատուում կորուսեալ դրամի, մոլորեալ ոչխարի, անառակ որդու առականների մէջ։ Արեւի լոյսի պէս պայծառ է այստեղ այն ամենը, ինչ որ մեր կեանքին է վերաբերում։ Աւետարանական ճանապարհի վերայ չի մոլորուիլ ի՞նչ մի ճանապարհորդ։ Դա մի պարզ խօսակցութիւն է մեզ մերձաւոր Եւկի հետ։ Աստուծոյ մեծ իմաստութեան արտայայտութիւնն է դա, որ իջնում է՝ օգնութեան է հասնում մեր անկարողութեան, որպէս զի մենք կարող լինինք բարձրանալ, մօտենալ նորա մեծ վայելչութեանը։

Ո՞րքան մօտ է Ս. Գիրքը (եւ խօսում եմ այժմ իմ սեփական զգացմունքների մասին) այն բոլորին, ինչ որ մեզ է վերաբերում։ Նա խօսում է իմ մարմնի, իմ վատթարութեան և իմ յանցանքների մասին այնպէս, ինչպէս միմիայն կարող էր խօսել նա, ով որ ճանաչում է ինձ։ Վերին աստիճանի

համութեամբ է խօսում նա իմ փորձութիւնների մասին։ Ինչ որ եւ ասել անգամ չեմ համարձակուում, նա այն էլ գիտէ, նա խօսում է իմ բոլոր գիտարութիւնների մասին։ Ուրիշները ինձ արհամարհանքով կը նայէին և վերաս կը ծիծաղէին, բայց այս Գիրքը միշտ ցաւակցութեամբ է նայում ինձ։ Նա գիտէ թէ ինչից եմ վախենում, ինչից դողում, ինչի մասին կասկածում։ գիտէ այն բոլորը, ինչ որ յուզում է իմ էութեան փոքրիկ աշխարհը։ Այս գիրքը ինձ հետ անցել է իմ բոլոր փորձութիւնների միջով, գիտէ իմ բոլոր ճանապարհները և խօսում է ինձ հետ, իրրեւ բարեկամի հետ։ Նա չի պահանջում ինձից անկարելին, չի հայհոյում ինձ և չի նայում ինձ վերայ բարձունքից՝ իւր անհասանելի կատարելութեան գագաթից։ Ոչ, նա կարող է միմիայն ցաւակցել անկեալ մարդկան, նա կարծես թէ տխրել է իմ թուլութիւնների վերայ, կարծես թէ ճաշակել է ինձ հետ այն բոլոր փորձութիւնները, որ եւ կրել եմ։ Նա վեհ է, ինչպէս Աստուած, և չնայելով դորան, նա լալիս է ինչպէս մարդ։ Աստուածային խօսքը ամեն ինչի վերայ ուշադրութիւն է դարձնում։ նորա համար չափազանց փոքր, չափազանց դառն, կամ նոյն իսկ չափազանց մեղսական բան չը կայ, նա վերաբերում է մարդկային կեանքի մէջ ամեն մի բանի։ Նա անձամբ և մօտիկ ծանօթ է բոլորի հետ և կարծես թէ ասում է քեզ. «Մի՛ թէ թագուստ ինչ իցէ յԱրաւհամէ ծառայէ իմմէ»։

Եւ ի՞նչպէս յաճախ Ս. Գիրքը պատասխանել է տրուած հարցերին, Գիտար հանգամանքներում եւ հիացել եմ՝ տեսնելով թէ ինչպէս ուղղակի և որոշ կերպով պատասխանում է ինձ այս մարգարէն։ Դուք հարցրել էք ձեր բարեկամներին և նոքա չեն կարողացել խորհուրդ տալ ձեզ. բայց դուք զիմի էք Ս. Գրքին և նա ձեզ պատասխանել է։ Դուք անհանգիստ էք, աշխատում էք պարզել ձեր առաջ դրած մի հարց, բայց արէք Ս. Գիրքը և կը գտնէք այնտեղ հարկաւոր մեկնութիւնը։

Ուրեմն անկասկած է, որ Աստուծոյ խօսքը մեզ հետ խօսում է ինչպէս մեզ մօտիկ մի էակ։ Արդեօք կենդանի կերպով զգում ենք այդ, եթէ զգում ենք, կարո՞ղ ենք մոռանալ նորան, կամ անտարբեր լինել դէպի նա։ Չպէ՞տք է արդեօք աշխարհի երեսին ամեն բանից աւելի բարձր գնահատենք նորան, եթէ նա խլուէր մեզնից, մենք կը կորցնէինք մեր ամենալաւ և ամենաբարի մոխթարչին կարիքի դառն ժամում։ Տայ ուրիմն Աստուած մեզ աւելի սէր դէպի Ս. Գիրքը։

Դ. Բնաբանը պարզ ցոյց է տալիս, որ Աստու-

ծոյ խօսքը պատասխանում է: «Զործամ՝ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ», չէ ասում: «կասէ քեզ», չէ՞ որ ամբողջ խօսակցութիւնը մի մարդու հետ չի կարող մի կողմից լինել, նա պատասխան է պահանջում: Իւրաքանչիւր կողմը մի բան ունի ասելու, երբ խօսակցութիւն տեղի ունի: Ս. Գիրքն ևս հրաշալի կերպով խօսակից է. նա խօսում է և մարդկանց էլ ստիպում է խօսել: Գառնամ իմ առաջուայ ասածին: Ենթադրենք թէ դուք հոգեկան մի որոշ վիճակի մէջ մօտենում էք Ս. Գրքին. դուք անշուշտ նկատած կը լինիք, որ Աստուծոյ խօսքը այդ վիճակին յարմար պատասխան է տալիս: Եթէ դուք մտայլ և տխուր էք, կարծես թէ նա էլ սե է հագնել, որպէս զի վշտակից լինի ձեզ: Երբ դուք թշուառ վիճակի մէջ էք, Ս. Գիրքը կարծես սգալով հեկեկում է ձեզ հետ և ոչ թէ ամաչեցնում կամ վիրաւորում ձեզ, ինչպէս Յօրի ողորմելի մխիթարիչները: Բայց ենթադրենք թէ դուք մօտենում էք Ս. Գրքին ուրախութիւնից փայլող աչքերով, դուք խելոյն զգում էք՝ նորա անկեղծ ուրախութիւնը, նա ձեզ համար սկսում է սաղմոս երգել և քնար նուագել:

Ինչպէս որ ջրի մէջ անգրադառնում է մարդու պատկերը, նոյնպէս և Աստուծային ճշմարտութեան կենդանի աղբիւրի մէջ մարդ տեսնում է իւր սեփական նկարագիրը:

Եթէ Ս. Գրքին մօտեցողը շնորհաց աղբեցութեանը տակ գտնուող՝ կատարելութեան բարձր ձրգտումներ ունեցող մէկն է, Ս. Գիրքը ընդարձակուում է աւելի մեծ և աւելի բարձր է երևում: Նա միշտ բարձր է մեղմից և ուրախ բացականչում է. «դէպի վեր, միշտ դէպի վեր»: Եւ ոչ զք երբէք չի կարող բարձրանալ Ս. Գրքից, ճշմարիտ է, իւր ետեւութեամբ նա չի կարող աճել, որովհետեւ նա կատարել է. բայց մեզ այնպէս է թուում, երբ նորա մասին ունեցած մեր հասկացողութիւնը ընդարձակում է: Քանի աւելի խոր թափանցենք Ս. Գրքի մէջ, այնքան աւելի կը համոզուենք, որ դա ճշմարտութեան մի անսպառ աղբիւր է: Գեո. նորա սկզբնական ուսումնասիրութեան ժամանակ հաւատացեալը ասում է. «ես հասկանում եմ աւետարանական ճշմարտութիւնը», բայց մի քանի ժամանակից յետոյ, երբ նորա հոգին զարգանում է և Քրիստոսի մասին աւելի բան է սովորում, նա խոստովանում է ծիրոջ առաջ. «անսահման ընդարձակ են Քրիստոսիցները. ես նոր եմ սկսում հասկանալ նոցա»:

Աստուծային խօսքի մէջ կայ մի առանձին յատկութիւն, որ ցոյց է տալիս նորա մեզ համապատասխան լինելը. այն է, որ երբ դուք բաց էք

անում նորա առաջ ձեր սիրտը, նա ևս բաց է անում ձեր առաջ իւր սիրտը, նա ունի զաղտնիքներ, որ չի բաց անում՝ պատահական ընթերցողի առաջ. նա ունի գանձեր, որ գանել կարող է միայն հմուտ հանքահանը: Նուիրութիւր Ս. Գրքին, Ս. Գիրքն էլ քեզ կը նուիրուի: Եղիբ նորա հետ բոլորովին անկեղծ, և Ս. Գիրքը կը վերցնէ իւր ոսկէ բանալին և բաց կանէ մէկը միւսի յետեւից իւր գանձատան գոնեւոր և ցոյց կը տայ քո շլացած աչքերին ոսկու և արծաթի մեծամեծ կոյտեր:

Եթէ դուք սիրէք Ս. Գիրքը և արտայայտէք նորան ձեր սէրը, նա էլ ձեզ կը սիրի: Նա իւր մաստուցութեան բերանով ասում է. «ես սիրում եմ» նոցա, որոնք սիրում են ինձ: Եթէ Ս. Գիրքը կարդալիս՝ ես տեսնում եմ, որ նա չէ համապատասխանում իմ հայեացքներին, նշանակում է, որ հասել է ժամանակը, երբ պէտք է փոփոխուին իմ հայեացքները. իսկ Աստուծոյ խօսքերը պէտք է մնան անձեռնմխելի: Նոցա չէ կարելի ձեռք տալ, չէ կարելի փոփոխել, ինչպէս անում են մի քանի մեկնաբանների, կտրտելով նոցա, տեղափոխելով և յարմարեցնելով իրենց հայեացքներին: Աստուծոյ խօսքը ուղիղ է դատում, իսկ մենք սխալ, ուստի և չենք համաձայնում նորա հետ: Աստուծոյ խօսքը տալիս է մի անսխալ ուսմունք, որ ընդունել պէտք է այնպէս, ինչպէս որ կայ: Եթէ Աստուծոյ խօսքը այնքան սիրէք, որ նորա մի տողն անգամ փոխել չըկամենաք, և եթէ նորան այնքան բարձր դնահատէք, որ պատրաստ լինիք մեռնելու նորա մի որ և է ճշմարտութիւնը պաշտպանելու համար, այն ժամանակ նա իրօք թանգ կը լինի ձեզ համար և դուք՝ նորա համար: Եւ ժամանակից նա կը բացուի ձեր առաջ այնպէս, ինչպէս չի բացուում աշխարհի առաջ:

Ե. Աւերպպէս, Ս. Գիրքը զօրեղ ներգործութիւն ունի մեզ վերայ, եւ այս եզրակացնում եմ նորանից, որ Սողոմոնը «յործամ՝ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ» խօսքերից յետոյ՝ աւելացնում է. «որպէս զի պահպանէ քեզ կամ մեղքերից հեռու պահէ»: Աստուծոյ խօսքը մեզ հետ խօսակցելիս զանազան ձանադարհներով մեզ վերայ բարեբար աղբեցութիւն ունենալ կարող է:

Նա մեղմացնում է մեր տանջանքները և քաջալերում է մեզ, Շատ զօրականներ պատրաստ են եղել հեռանալ կեանքի կուռի գաշտից, բայց Աստուծոյ խօսքը զրկել է իւր ձեռքը նոցա վերայ և ասել. «կանգնիր տեղդ, մի յուսահատուիր, արի եղիբ, ես կօգնեմ քեզ, ես ոյժ կը տամ քեզ, եւ աջը նեցուկ կը լինի քեզ»: Կեզ յայտնի են շատ

արիասիրտ սրբերի՝ բայց չգիտենք, թէ ինչպէս երկիւղը և թուլութիւնը կը պաշարէր նոցա, եթէ Աստուծոյ խօսքը օգնութեան չհասներ և զօրավիգ չլինէր նոցա:

Մեծ է ուրեմն նորա կենդանարար զօրութիւնը, որով մխիթարում և քաջալերում է մեզ, երբ մենք ամաչում ենք մեր սեփական թուլութիւնից և չը գիտենք ի՞նչպէս շարունակենք մեր կեանքը, ինչպէս առաջ գնանք, Աստուծոյ խօսքը մեզ թէ է տալիս և առաջ մղում: Արդեացէք երկնաւոր վարդապետի մահից առաջ կրած չարչարանքները և դուք կը զգաք, որ քրիստոնեայ էք դէպի՝ նա ունեցած սիրոյ շնորհիւ, նորա անունն էք կրում և ինչ որ առաջ ձեր աչքում կ'արեւորութիւն ունէր, այժմ շնչին է երևում և ինչ որ առաջ ձեր հպարտութիւնն էր կաղմում բեւեռած է այժմ՝ նորա հետ խաչի վերայ:

Արդեացէք Ս. Գրքում երկնային երանութեան և փառքի մասին և դուք կը զգաք, որ յառաջ պէտք է ընթանաք որչափ կարելի է արագ, որովհետեւ ձեր առաջ փայլում է երկնային լուսոյ պսակը, Երբէք մարդս այնպէս բարձր չէ կանգնած նիւթական շահի կամ աշխարհային փառքի հաշիւներին, քան այն ժամանակ, երբ նորա հոգին խորատուգուած է ճշմարտութեան Հոգու մէջ, որով ներշնչուած է Ս. Գրքը, նա ոչ միայն մխիթարում է, այլ և վեհութիւն է տալիս:

Եւ ի՞նչպէս յաճախ մեր նախազգուշացուցիչն է նա և պաշտպանը, ես կը գնայի աջ կամ ահեակ, եթէ որ Աստուծոյ օրէնքը չստէր. «Թող քո աչքերը նայեն ուղիղ և թող քո արտեանունքները չը շեղուին ուղիղ ճանապարհից»: Ս. Գրքը յաճախ մեր կեանքի ծովի վերայ փոթորիկ նախազուշակելով համոզում է մեզ, իրրեւ անզգոյշ ծովագնացների, մնալ նաւահանգստում:

Եյս Գրքի սուրբ խօսակցութիւնը սրբազործում և կերպարանափոխում է մեր հոգին՝ Քրիստոսի պատկերի համաձայն: Ընորհքը ձեր մէջ չի զարգանալ, եթէ դուք չէք կարգում Ս. Գրքը, եթէ Աստուծոյ խօսքը մօտիկ չէ ձեր սրտին, այն ժամանակ դուք չէք կարող յոյս ունենալ Աստուծոյ վերայ, եղէք յաճախ Աստուծոյ և խօսքի հետ և դուք ևս սուրբ կը լինէք, եթէ յափշտակուէք ժամանակակից վէպերով և ամեն տեսակ գատարկ զբոսերով՝ ձեր ժամանակը իղուր կը վատնուի, բայց եթէ Ս. Գրքի ուսումը լինի ձեր առաջնորդը՝ այն ժամանակ դուք իսկական մարդ կը լինիք:

«Եւ յորժամ յանդիման խօսակից իցէ քեզ», Մօտենում է ժամանակը, երբ մենք բոլորս կը նըն-

ջենք մահուան քնով: Ո՛հ ինչպիսի երջանկութիւն պիտի զգանք մենք, երբ զարթնինք կրկին, եթէ մօտ ենք եղել Աստուծոյ խօսքին, նա կը խօսէ այն ժամանակ մեզ հետ և կը նորոգէ իւր բարեկամական յարաբերութիւնը, Այն ժամանակ կը կատարուեն այն խոստումները, որ մեզ կեանք էին տալիս. ապագայ երանութեան մասին եղած բոլոր յայտնութիւնները կ'իրագործուին և Քրիստոսի դէմքը, որ այժմ երևում է մեզ իրրեւ մի պղտոր ապակու միջից, բոլորովին կը բացուի մեր առաջ և փայլ կը տայ մեզ, ինչպէս արեւն իւր բոլոր զօրութեամբ: Տայ՝ ուրեմն Աստուած, որ սիրենք Աստուծոյ խօսքը և սնունքը նորանով, որպէս զի կարողանանք ապրել ի փառս Աստուծոյ մեր կեանքի բոլոր օրերում:

Թարգմ. Ռ. Ս.



ԲԱՐԻՈՅ ԵՒ ՉԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Ըստ Պրոֆ. Պաուլսենի:

Եյն խնդիրը, թէ արդեօք *հրոսեյից* է չարը սկիզբն առել՝ զբաղեցրել է ամէն ժամանակ մտածող մարդոց, և անթիւ փորձեր են եղել ցոյց տալու համար, թէ հակառակ նորա գոյութեան աշխարհս սյնուած են այնիւ բարի է: Եթէ մենք այդ փորձը կրկնում ենք, նորա համար չէ անշուշտ, որ ապացուցանենք, թէ իրական աշխարհը բացարձակ բարի է, կամ կարելի եղածների մէջ ամենաբարին, բացարձակի ու անսահման կարելիութեան մասին մեր հասկացողութիւնը հեռու չէ գնում: Ինչքան կարող եմք միայն առել, թէ ի՞նչ է աշխարհը մեզ համար: Այդ նկատմամբ ահա, կարծում ենք, կարելի է ցոյց տալ, որ նա ընծայում է մեր բնութեան համապատասխանող զարգացման պայմանների մեր ոյժերի արծարծման ծառայող միջոցներ, մեր կեանքին, եթէ ինքներս կամենանք, հարուստ և գեղեցիկ բարգաւաճում: Մեզ համար այնպէս՝ ինչպէս որ կանք, մի ուրիշ զը-